

Մարիամ Ավետյան

Հայաստանում Ամերիկյան համալսարանի ֆաղաֆագիտության բաժնի երկրորդ կուրսի ուսանող:

Հախվերդյանների ողջ ընտանիքն անցավ բռնաճնշումների ոլորաններով



Նկարում մեծ պապս՝ Հովհաննես Հախվերդյանը կնոջ՝ Մարգո Սարատիկյանի, և ավագ որդու՝ Լևոնի հետ 1925թ.

Իմ մեծ պապու Հովհաննես Հախվերդյանի բռնադատման ու ահաբեկ պատմությունը ես վերականգնել եմ փաստաթղթերով, նամակներով ու բարեկամների հուշերով: Սա ոչ միայն մեկ մարդու ողբերգական պատմություն է, այլև մեծ ընտանիքի գլխին թափված աղետ, որը որքան էլ տարօրինակ է, մինչ այսօր էլ թարմ վերք է: Ու առիթ կառուցելու այս էսսեն որպես հուշերի ու փաստերի համադրում:



Նկարում՝ Հ. Հախվերդյանը կնոջ՝ Մ.Սարատիկյանի և որդիների՝ Լևոնի և Նորիկի հետ 1930թ.

«Ես անկախ ինձանից մտածում եմ ամեն ինչի մասին ու բոլորի մասին», - իր ընտանիքին էր գրում ահաբեկված 4,5 տարի գտնվող Հովհաննես Հախվերդյանը, երբ իր ազատմանը մնում էր մի քանի օր:


Այդ ամեն ինչի ու բոլորի մասին մտածելու նրա տողից ազդված ես որոշեցի հարցուփորձ անել բարեկամներին, թե ինչ նակատագիր ու, ի վերջո, հանապարհ է անցել իմ մեծ պապը, և ինչպես է նրա նակատագիրը սպիացել իմ բոլոր բարեկամների սգում որպես մի մեծ ու չհաղթահարված հարց՝ ինչու՞:

Փաստերն իրականում շատ չեն, փոխարենը շատ են նամակները, որոնք մեծ պապս (մամայիս պապը) էր գրում կամ գրում էին նրան: Եվ իհարկե հիշողությունները:

Իրականությունը սա է:

1941-ի հոկտեմբերի 11-ին ՆԳԺԿ-ն եկավ պահեստագոր զինվորական Հովհաննես Հախվերդյանի հետևից: Նրան տարան իր բնակարանից՝ Երևանի Լենինի փողոցի 79 շենքի, բնակարան 2-ից, որտեղ ապրում էր իր կնոջ՝ Մարգո

Ստառտիկյանի ու երեք որդիների՝ 16-ամյա Լևոնի, 13-ամյա Նորիկի, 2 տարեկան Հովիկի հետ: Այդ ժամին բնակարանում երկուսով էին՝ հայրն ու ավագ որդի Լևոնը: ՆԿՎԴ-ի երկու աշխատակից որպես վկա /պոնյատոյ/ կանչեցին հարևանին, կազմեցին արձանագրություն, որն էլ ստիպեցին ստորագրել 16-ամյա որդուն (բարդ է ասել, թե ինչ է այդ պահին վերապրել հետագայում բանասիրության դոկտոր, Փիտոլյունների ակադեմիայի թղթակից անդամ, բազմաթիվ թատերագիտական ու գրականագիտական գրքերի հեղինակ Լևոն Հախվերդյանը, բայց կարելի է ենթադրել, որ ցանկացած անհնազանդության ֆալ կարող էր անդառնալի հետևանքներ ունենալ, քանի որ բռնահեռան մեքենան արդեն վաղուց շարժման մեջ էր):



Հ.Հախվերդյանի ձեռքակալության արձանագրությունը 1941թ. հոկտեմբեր:

Այդ մեքենան խեղեց ԽՍՀՄ-ի միլիտար ընտանիքներից ևս մեկ ընտանիքի հակատագիր: Ստալինյան բռնահեռանների մտադրով անցած բոլոր ընտանիքների պատմություններն ունեն սարսափելի անարդարության ընդհանրացում, բայց այս պատմությունն իմն է, և ուրեմն՝ վերապրելն ավելի ծանր: Հատկապես, որ այդ պատմության արձագանքները ես տեսնում եմ նաև հիմա, երբ մայրս ու մորաքույրս իրենց գրույցներում հիշատակում են անուններ, տեղանքներ ու օրենսգրքից հողվածներ, որոնք ինձ համար ոչ միայն անձանք են, այլև թվում են անհետք ու սարսափելի:

Կարմիր տետրը ու սովը դարձան այն իրականությունը, որի միջով անցան իմ հարազատները: Անցան՝ փորձելով մարդ մնալ, երբ միջավայրը հեռու էր մարդկային լինելուց:

Լենինի փողոցում, որը հետագայում ստացավ կարմիր հեղափոխան Ալավերդյանի անունը, իսկ հիմա Հանրապետության փողոցն է, 1938-ին կառուցվեց չորսհարկանի բազմաբնակարանային շենք, որի օրդերը Հովհաննես Հախվերդյանը

ստացավ նույն տարվա վերջին՝ որպես Հայաստանի Մանկավարժական ինստիտուտի ռազմագիտության դասախոս: Բայց հետաքրքիր է, որ նա չէր շտապում իր վարձով անից տեղափոխվել նոր բնակարան: Այդ շեղման տեղափոխված իր ռազմական ընկերներից երկուսն այլևս ձեռքակալված էին ու անհետացած: Երևի կրթված մարդու բնագրը ավելի ուժեղ ու սուր է գործում: Եվ որքան էլ վստահ լինես, որ անմեղ ես, միևնույն է պատկերացնում ես, թե ինչպես է աշխատում գաղափարախոսական մեհենան, որին գոհեր են անհրաժեշտ որպես սնունդ:

1940-ին ֆանդեցին Սվերդլով փողոցի (այժմ Ֆիրդուսի քաղամաս) նրանց վարձով տունն ու Հովհաննես Հախվերդյանի ընտանիքը ստիպված նոր բնակարան տեղափոխվեց: Մեկ տարի միասին ապրեցին այդ հասցեում:


Տարբեր վարկածներ կան, թե ինչու և ինչպես ստացվեց, որ մեզնից ու կիրթ շարքային դասախոսին առաջադրվեց 58 հոդվածով ազգի դավանանքի մեղադրանքը:

Ձերբակալումից մի շաբաթ առաջ մի դեպք պատահեց: Մեծ պապս մտավ իրենց տան կողքի պարենային խանութը (հայտնի Բակալեյա-ն) ու հանդիպեց հարևանին: «Հովհաննես, ինչպե՞ս ես» հարցին, մեծ պապս պատասխանեց.

- Ինչպե՞ս պիտի լինեն. Ահա, խնդրեմ, աշխատավարձ եմ ստացել, մեկ կիլո շափար, այլուր ու մակարոն առա, փողը վերջացավ:


Այս խոսքերը կարող էին ընկալվել, թե նա դժգոհ է սովետական կարգերից: Եվ ուրեմն թեմամի է մի երկրում, որտեղ բոլորը պարտավոր էին գոհ լինել, առնվազն՝ բարձրաձայն: Սա մեծ տատիս, Մարգո Սարատիկյանի բանասրկու հարևանի մասին վարկածներից մեկն է:

Հստակ պատասխան «Ինչու՞» հարցին չկա, գուցե այս անհոգաբաժնի մեղադրանքի ոտները անում էին մեծ պապիս կենսագրական մեկ այլ փաստից ու սրա համար պետք է հետ գնալ ցարական ժամանակահատված: Հովհաննես Հախվերդյանը ծնվել է 1895-ին, Կոթի Գեղում, 7-ամյա կրթություն ստանալուց հետո մեկնել է Թիֆլիս, այնտեղից էլ՝ Պետերբուրգ, որտեղ ծառայել է ցարական բանակում: Հեղափոխությունից, հետևաբար՝ ցարական բանակի վերացումից հետո, 1918-ին վերադարձել է Հայաստան: Սպա կոչումով մեծ պապս 1919-ին ընդունվել է աշխատանքի որպես պրավոքուրի Դիլիջանի բանտի և 6-րդ դատարանի գեղում: Ու կրկին բնագրի սուր զգացումով՝ սովետիզացիայի տարածումի հետ մեկտեղ որոշեց «Շառից-փորձանից» հեռու վերադառնալ Կոթի գյուղ, որտեղ էլ 1920-21 թթ. աշխատել է առաջին աստիճանի դպրոցի ուսուցիչ:



Կորիի գյուղխորհրդից տեղեկանք

Այս ժամանակահատվածում արժե կանգ առնել՝ բանտարկության ևս մի վարկած ֆենարկելու համար: Երբ այլևս ախտարկվալիքում գտնվող հոր վնիւրը մեղմելու նպատակով ընտանիքը տարբեր վայրերից ու մարդկանցից բնութագրեր ու տեղեկանքներ էր փորձում կարգել, որոշ գրություններում հանդիպում ենք բուրջիկ հայտնված տղի. «Թեև Հովհաննես Հախվերդյանը համակրում էր դաճակցությանը...»:



Հ.Հախվերդյանի ռեաբիլիտացիայի համար

տեղեկանքներից մեկը

Կարող էր արդյո՞ք ընդամենը համակիր լինելու փաստը 58 հոդվածի համար բավարար լինել: Իհարկե, կարող էր: Կամ ցարական բանակի սպա լինելու կենսագրական փաստը դարձնու՞մ էր նրան բուլժեխզմի օտար գաղափարակիր: Շատ հանգիստ դարձնում էր: Ստալինյան բուլդոզերի համար մեծ հաշվով կարևոր չէր իրականությունը, առավելևս կարևոր չէր մարդը, կարևոր էր միայն որպես պլանային առաջադրանք որքան հնարավոր է շատ մարդու ձերբակալել, վերացնել, ստորացնել, որ ի վերջո, ձևավորվի վախի մթնոլորտ: Որ ողջ մնացածները տեսնեն ու ընդունեն՝ հաջորդը կարող են իրենք լինել:

Իմ մեծ պապի պատմության մեջ ոչ մի տրամաբանական շորթ չի կառուցվում փաստերից. մինչև 1929-ը նա Սովետական Բանակի սպա է, վաճառի հրամանատար, մինչև ձերբակալումը 20 տարի դասավանդել է էլեկտրամեխանիկական և Քիմիական տեխնիկումներում, այնուհետև Մանկավարժական համալսարանում, համալսարանի տեղկոմի նախագահ էր, ռազմագիտություն ու ուսաց լեզու և գրականություն առարկաների դասախոս:

Հ.Հախվերդյանի վերջին աշխատանքային գրքույկը

Ու բաղադրված ճանաչվելու շնորհիվ իր հասցեին գրված շնորհակալագրերի, թերթում տպագրված հոդվածների ու զինադրված անհատների բազմաթիվ վկայությունները, որոնք այնքան մեծ ցանկերով միամտաբար փորձում էին հավաքել Հավիանենու Հախվերդյանի ընտանիքի անդամներն ու ընկերները: Էլ չասած, որ Հայրենական պատերազմն արդեն սկսված էր և իր ռազմագիտական գիտելիքները մեծ օգուտ կարող էին տալ:



Հ.Հախվերդյանի մասին հոգվածների ու բնութագրերից օրինակներ

1941-ի հոկտեմբերի՝ ձերբակալումից հետո մոտ 3 ամիս ոչ մեկին հայտնի չէր, թե նա որտեղ է, արդյո՞ք ողջ է, թե՞ գնդակահարվել է: Հայաստանում է, թե՞ միգրացե Սիբիրում: 1942-ի փետրվարի 8-ին ընտանիքը կարճ գրություն ստացավ. «Ես լավ եմ, գտնվում եմ Երևանի բանտում (բանտի թիվը ջնջված էր): Խնդրում եմ ինձ ուղարկել 10 կիլո հաց... Ձեր պապա Հախվերդյան Հովհաննես 20/1. 1942»:

Հայր, ինչ է քո ջանքը!
 ես ամբողջովն քեզ համարեցի
 քեզ թաքցրած ~~մասին~~ քեզ
 քեզ: խնայեցի քեզ շատ ինչ հա-
 ջարդ մտածարան 10 շին հաց
 և իմանի ամբողջովն և ինչ
 շարժեցի: Խնայեցի քեզ շատ
 շատ և խնայեցի
 Խնայեցի քեզ
 ջոկ պարզապես քեզ համար
 20/1. 20/1. 1942

Հ. Հախվերդյանի
 20/1. 20/1. 1942
 20/1. 20/1. 1942
 20/1. 20/1. 1942
 20/1. 20/1. 1942
 20/1. 20/1. 1942

Հ.Հախվերդյանի առաջին գրությունը ձերբակալումից հետո

լավ է սովորում, որ մասնակցում է մարմնամարզության մրցույթներին, որ ամեն ինչ լավ է: Թեև, իհարկե, ամեն ինչ լավ չէր:

Աֆսոսաբանության նամակագրությունը մայրիկիս ազգականները խնամով պահպանում են, ինչպես իրենք են ասում՝ բացարձակ պարկետ ու գրագետ անձնավորության վավերագրությունը օգնում է պատկերացնել ոչ միայն իրականությունը, այլև չգրվածն ու չասվածը: Այն, ինչը ուղիղ կերպով հասկանալ չէր կարելի: Կարելի էր միայն սողատակերով ու ենթատեխտերով վերակառուցել:



Հ. Հախվերդյանի նամակագրությունը աֆսոսաբանության

Բառերը ոչ այնքան պատմում են, որքան բողբոջում ու քաջանում են: Օրինակ, ծանր աշխատանքը տափաստանում կառուցվող երկարգծում, մալարիայով հիվանդանալու ու մինչև վերջ չապափինվելու փաստը, հետո տեղափոխումը ավելի հանգիստ աշխատանքի կանցելարիայում (Հովհաննես Հախվերդյանը տիրպետում էր շատ գեղեցիկ գրական

ուսերենի): Եվ նա փորձում էր դիմակայել այն պայմաններում, որոնցում հայտնվել է, պարզ սաած՝ չմահանալ, հուշով, որ կհանդիպի իր հարազատներին:

Իր նամակներում նա խնդրում է հաց, չորաթան, տաֆ հագուստ, թուղթ, լուցիկ... Այսինքն, ցանկացած մթերք կամ ապրանք փոխանակելու ու գոյատևելու համար: Առաջին կարգի թուրունը ԿՈՒՂԱԳ-ում ոսկու գին ուներ և, ուրեմն՝ առաջինը սա էր ուղարկվում: Ղազախստանի տափաստային չուլերում նամակից՝ նամակ, պասիլկայից՝ պասիլկա գոյատևող մարդու տողերում ֆողարկված դառնություն է, որ չի տեսնում որդիների մեծանալը, գրաֆնությունից խափա տալով իր անմեղությունը բացատրելով՝ թափցնում էր անգամ ֆողցիկի պատճառով իր դանդաղ մահի փաստը:

«Բայրացկան ու մեծահոգաբար» նրան ժամկետից շուտ ազատեցին. 5 տարիների փոխարեն՝ չորս ու կես տարի հետո: Ավելի ճիշտ է ասել՝ ոչ թե ազատեցին, այլ ուղարկեցին տանը մահանալու:

Մարգո տատը ապրեց 83 տարի: Կիրակի առավոտյան հայտարարեց՝ էսօր մեռնելու են: Երեք որդիները, իրենց կանանց ու գավակների հետ խտանված ժամանեցին իր մոտ: Տեսնելով, որ մայրիկը մշտականի պես ժիր՝ հարիսա է եվում, հանդարտվեցին ու զարմանային կիրակին դանդաղ ծորաց: Երեկոյան Մարգո տատը մեկ ափսե հարիսա կերավ, պառկեց ֆնելու: Ու չարթանացավ: Ինքն իր խոսքի տերը մնաց նույնիսկ վերջում:

Սովետական բարբերը այլ հնարավորություն չէին թողել անժպիտ ու կամային Մարգո Սարատիկյանին՝ նա պիտի իր խոսքի տերը միշտ լիներ, որ իր տոհմը չվերանար: Սոցիալիզմ կառուցելու բոլոր «բարիքները» նա վայելեց. հոր՝ Կոթի Գեդի բժիշկ Արամ-Բեկի ունեզրկումը, ազգի դավանանի կնոջ պիտակը, սովի տարիների սնունդի հայթայթումը՝ որդիներին կերակրելու և ափսոսալից ուղարկելու համար, պատերազմում անհետ կորած եղբոր գույժը, մյուս վիրավոր եղբոր խնամքը, քրոջ երեխայի խնամակալությունը:

1953 մարտի 5-ին արհամարհական ժպտաց, ասելով՝ գյոռբագյոռ եղավ դա...

Ստալինի մահով կարծես անտանելի բեռից մի բեկոր ընկավ նրա վրայից:

1958-ին Հովհաննես Հախվերդյանին ռեաբիլիտացրեցին: Ստալինյան բռնաճնշումների գոհ դարձած նրա անունը մաքրվեց ազգի դավանան պիտակից: Եվ դա անհատական ռեաբիլիտացիա էր, ուշացած ու մեծ հաշվով իմ մեծ ընտանիքի կյանքում շատ բան չփոխած փաստ:

Копия:

ВЕРХОВНЫЙ СУД АРМЯНСКОЙ ССР

№ 5/299 22/У-1958 г.

СПРАВКА

Дана настоящая справка в том, что определением Судебной Коллегии по уголовным делам Верховного Суда Арм.ССР от 20-го мая 1958 года, постановление особого совещания при НКВД СССР от 24-го июля 1943 года в отношении ДХВЕРДЯНА ОГАНЕСА РЕВАЗОВИЧА отменено и дело прекращено за недоказанностью обвинения.

До ареста - военрук Армянского Педагогического Института.

Зам. Председателя
Верховного Суда Арм.ССР *подпись* АРА КЕЛЯН/

с. 14" / кч
судебн 1958 г. Я *Боборкель С.К* Нотариус
Государственной Нотариальной конторы, свидетельст-
вую верность этой копии с подлинником ее. При сличении копии с
подлинником, в последнем поправон, прописок, зачеркнутых слов и
других особенностей не оказалось.
Езысано Госпошлины *9* руб. по по реестру № *13 268*
м.п. *Нотариус* *Др...* /подпись/



